

ՏԵՂԱՅԻՆ ՍԵՄԻՆԱՐՆԵՐ

- ✓ 2016թ. նոյեմբերի 8-ին ՀՀ ԱՎԾ նախագահ Ս. Մնացականյանը, տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար Լ. Մարկոսյանը և ՀՀ ԱՎԾ «Պետական վիճակագրական տեղեկատվության հավաքագրում» ծրագրի ավագ վիճակագիր Դ. Մարտիրոսովան մասնակցել են ք. Երևանում կայացած Հայաստանում աղքատության բազմաչափ ազգային գնահատականի հիմնական եզրահանգումների քննարկմանը,
- ✓ 2016թ. նոյեմբերի 9-ին ՀՀ ԱՎԾ աշխատանքի վիճակագրության բաժնի պետ Լ. Քալանթարյանը մասնակցել է ք. Երևանում կայացած ՀՀ վարչապետի 2016 թվականի հոկտեմբերի 20-ի թիվ 02/14.4/15799-16 հանձնարարականով ստեղծված Հայաստանի Հանրապետությունում գենդերային քաղաքականության իրականացման 2017-2021 թվականների ռազմավարական ծրագրի մշակման նպատակով ստեղծված միջգերատեսչական աշխատանքային խմբի անդրանիկ նիստին,
- ✓ 2016թ. նոյեմբերի 18-ին ՀՀ ԱՎԾ սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության գլխավոր մասնագետ Ա. Հակոբյանը մասնակցել է ք. Երևանում կայացած «Մասնակցային որոշումների կայացում ներառման միջոցով» միջազգային ծրագրի շրջանակներում կազմակերպված «Ներառական որոշումների կայացում» խորագրով ՀՀ պետական մարմինների աշխատակիցների համար դասընթացին,
- ✓ 2016թ. նոյեմբերի 18-ին ՀՀ ԱՎԾ մարդահամարի և ժողովրդագրության բաժնի պետ Կ. Կույումջյանը մասնակցել է ք. Երևանում կայացած «Միգրացիայի և զարգացման տեսանկյունից Հայաստանի առաջնահերթությունները, վերջիններիս տեղայնացման համատեքստում հնարավոր ցուցիչների մշակման, ինչպես նաև առկա տվյալների հավաքագրման մեխանիզմները» խորագրով աշխատաժողովին,

- ✓ 2016թ. նոյեմբերի 25-ին ՀՀ ԱՎԾ բիզնես ռեգիստրի, ընտրանքի և դասակարգիչների բաժնի պետ Վ. Արևշատյանը մասնակցել է ք. Երևանում կայացած Տնտեսական համագործակցության զարգացման կազմակերպության՝ հարկման նպատակով թափանցիկության և տեղեկությունների փոխանակման Գլոբալ ֆորումի ներածական ծրագրի աշխատանքային խմբի հանդիպմանը,
- ✓ 2016թ. նոյեմբերի 28-ին ՀՀ ԱՎԾ մարդահամարի և ժողովրդագրության բաժնի պետ Կ. Կոյունջյանը մասնակցել է ք. Երևանում կայացած «Պտղի սեռի խտրական ընտրության հիմնախնդրի լուսաբանման առանձնահատկությունները զանգվածային լրատվության միջոցներում» խորագրով կլոր-սեղան քննարկմանը,
- ✓ 2016թ. նոյեմբերի 28-30-ը ՀՀ ԱՎԾ աշխատանքի վիճակագրության բաժնի պետ Լ. Քալանթարյանը, սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժնի պետ Ն. Բաղդասարյանը և նույն բաժնի երկրորդ կարգի մասնագետ Ս. Հովսեփյանը մասնակցել են ք. Երևանում կայացած «Գործնական մոտեցում հմտությունների կանխատեսմանը՝ թիրախավորված զբոսաշրջության և ՏՏ ոլորտներին: Վերլուծություն, կարողությունների զարգացում, գործնական կիրառում» խորագրով աշխատաժողովին,
- ✓ 2016թ. դեկտեմբերի 2-ին ՀՀ ԱՎԾ սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժնի պետ Ն. Բաղդասարյանը մասնակցել է ք. Երևանում կայացած «Սեռական շահագործումից և սեռական բնույթի բռնություններից երեխաների պաշտպանության մասին» Եվրոպայի Խորհրդի կոնվենցիայի վավերացման նպատակահարմարության վերաբերյալ ՀՀ անչափահասների արդարադատության խորհրդի նիստի շրջանակներում կազմակերպված հանրային քննարկմանը,
- ✓ 2016թ. դեկտեմբերի 6-ին ՀՀ ԱՎԾ գյուղատնտեսության վիճակագրության բաժնի պետ Ա. Ավագյանը մասնակցել է ք. Երևանում կայացած «ՀՀ Կառավարության գերակա ոլորտները գյուղատնտեսության ոլորտում ուղղորդելու, ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության համագործակցությունը ՀՀ Կառավարության հետ և վերջինիս ցուցաբերվող աջակցությունը հինգ տարվա ընթացքում՝ 2016-2020թթ.» փաստաթղթի ստորագրման արարողությանը,

- ✓ 2016թ. դեկտեմբերի 6-ին ՀՀ ԱՎԾ վճարային հաշվեկշռի և արտաքին առևտրի վիճակագրության բաժնի պետ Ք. Պողոսյանը մասնակցել է ք. Երևանում կայացած Ճապոնիայի միջազգային համագործակցության գործակալության կողմից կազմակերպված Տուրիզմի զարգացման վերաբերյալ քննարկումներին,
- ✓ 2016թ. դեկտեմբերի 7-8-ը ՀՀ ՎՊԽ անդամ Վ. Դավթյանը և ՀՀ ԱՎԾ տեղեկատվական ռեսուրսների կառավարման և տեխնոլոգիաների վարչության տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման բաժնի պետ Ա. Առուշանյանը մասնակցել են ք. Երևանում կայացած «Կրթության ամրապնդում և պաշտպանություն (հատուկ ուշադրություն դարձնելով երեխայի պաշտպանությանը) կլաստեր համադրումները» թեմայով աշխատաժողովին,
- ✓ 2016թ. դեկտեմբերի 7-ին ՀՀ ՎՊԽ անդամ Ա. Սաֆյանը մասնակցել է ք. Երևանում կայացած ԵՀԳ ներքո իրականացվող ԹԱՅԵՔՍ (TAIEX) և ՍՈՍՅՈՒ (SOCIEUX) ծրագրերին նվիրված տեղեկատվական աշխատաժողովին,
- ✓ 2016թ. դեկտեմբերի 8-ին ՀՀ ՎՊԽ անդամ Յու. Պողոսյանը մասնակցել է ք. Երևանում կայացած Կլիմայի փոփոխության համատեքստում ազգային հարմարվողականության պլանի մշակմանն ուղղված աշխատանքային հանդիպմանը,
- ✓ 2016թ. դեկտեմբերի 8-ին ՀՀ ՎՊԽ անդամ Վ. Դավթյանը մասնակցել է ք. Երևանում տեսակոնֆերանսի միջոցով կայացած DMCT նվազագույն պատրաստվածության գործողությունների դյուրացման նպատակով «Համայնքային ներգրավվածություն» խորագրով դասընթացին,
- ✓ 2016թ. դեկտեմբերի 9-ին ՀՀ ԱՎԾ սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժնի պետ Ն. Բաղդասարյանը մասնակցել է ք. Երևանում կայացած Հայաստանում ինովացիայի գործունեության զարգացմանը նվիրված գիտաժողովին,
- ✓ 2016թ. դեկտեմբերի 16-ին ՀՀ ՎՊԽ անդամ Յու. Պողոսյանը մասնակցել է ք. Երևանում կայացած Արարատյան դաշտի ստորերկրյա հորատանցքերի, բնական աղբյուրների և ձկնային տնտեսությունների ներկայացման միջոցառմանը,

- ✓ 2016թ. դեկտեմբերի 13-ին ՀՀ ՎՊԽ անդամ Յու. Պողոսյանը մասնակցել է ք. Երևանում կայացած Արևելյան գործընկերության երկրների համար «Եվրոպական միության ջրային նախաձեռնություն+» ծրագրի բարձրաստիճան մեկնարկային հանդիպմանը,
- ✓ 2016թ. դեկտեմբերի 21-ին ՀՀ ԱՎԾ տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնի պետ Լ. Մարկոսյանը և ՀՀ ԱՎԾ «Պետական վիճակագրական տեղեկատվության հավաքագրում» ծրագրի ավագ վիճակագիր Դ. Մարտիրոսովան մասնակցել են ք. Երևանում կայացած Պարենի ապահովության համակարգող խմբի (FSCG) առաջին հանդիպմանը,
- ✓ 2016թ. դեկտեմբերի 23-ին ՀՀ ԱՎԾ նախագահ Ս. Մնացականյանը, ՀՀ ՎՊԽ անդամներ Գ. Գևորգյանը, Գ. Անանյանը, Ա. Սաֆյանը և ՀՀ ԱՎԾ աշխատակազմի թվով 20 աշխատակից մասնակցել են ք. Երևանում կայացած Հայաստանի Հանրապետության 2014թ. գյուղատնտեսական համատարած հաշվառման հիմնական արդյունքների շնորհանդեսին,
- ✓ 2016թ. դեկտեմբերի 28-ին ՀՀ ԱՎԾ վճարային հաշվեկշռի և արտաքին առևտրի վիճակագրության բաժնի պետ Ք. Պողոսյանը մասնակցել է ք. Երևանում տեսակոնֆերանսի միջոցով կայացած «2017-2019թթ. ԵԱՏՄ և ՄԱԿ-ի Առևտրի և զարգացման համաժողովի (UNCTAD) միջև համագործակցության ծրագիր» նախագծի փորձագիտական խորհրդակցությանը: